

4771

1914 Մհ 171

ИНСТИТУТ  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԹՈՒՂԹ

Պ Ի Ո Ս Ժ-Ի

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՊԻ ՀՈՒՎՍԱՅ.

ՆԱՅՐԱԳՈՅՆ ՔԱԶԱՆՈՅԱՊԵՏԻ,

ԱՌԹԻ ՎԵՇՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԳԱՐՈՒ ԽԱՂԱՂՈՒ-  
ԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԵԿԵՂԵՅԻՈՅ

Ուղղեալ առ համօրէն կաթողիկեայս որ ի սփիւռս  
ազգաց եւ ազանց Աւիստի,

եւ օրջաբերական բազր հանդերձ բացատրեամբ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵՑ  
Ի ՌՈՒՄԻԱ

ՍԱՐԳՍԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՏԷՐ-ԱՐՐԱՀԱՄԵԱՆ

282

Պ-62

Թ Ի Ֆ Լ Ի Զ

Յպարան Ն. Աղանեանցի, Պոլից. 7.  
1913





289

7-62

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԹՈՒՂԹ

ВЪДВО  
ИНСТИ  
ВОСТАНОВЛЕНІЯ  
Академии Наук  
СССР

Պ Ի Ո Ս Ժ-Ի



ՍՐԲԱԶԱՆ ՊԱՊԻ ՀՈՒՎՄԱՅ.

ՆԱՅՐԱԳՈՅՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ,

**ԱՌԹԻՒ ՎԵՇԱՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՐՈՒ ԽԱՀԱՂՈՒ-  
ԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԵԿԵՂԵՑԻՈՅ**

Ուղղեալ առ համօրէն կաթողիկեայս որ ի սփիւռս  
ազգաց եւ ազանց Աշխարհի,

եւ օրջաբերական բուրբ հանդերձ բացառօրեամբ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅ ԿԱՌՈՂԻԿԵՑ  
Ի ՌՈՒՍԻԱ

ՍԱՐԳՍԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՏԷՐ-ԱՐՐԱՀԱՄԵԱՆ



Թ Ի Ֆ Լ Ի Զ

Տպարան Ե. Աղանեանցի, Պոլից. 7.  
1913

2001

2010



Տպագրեալ կարգադրութեամբ Նորին Գերապայծառ  
Տէրութեան Տեառն Սարգսի Վարդապետի Տէր-Ար-  
քահամեան, Առաքելական Կառավարչի ամենայն  
Կաթողիկեայ Հայոց ի Ռուսաց Կայսրութեանն:

Ի 20 նոյեմբերի 1913 ամի:  
Ի Տփղիս:

50457 - ախ



36083. 66

## ԹՈՒՂԹ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

Երիցս երանեալ Սրբազան Տեառն  
վերոյ Պիոսի տասներորդի ծայ-  
րագոյն Քահանայապետի յաղագս  
ընդհանուր Յորեիկի ի յիշատակ  
խաղաղութեան զոր շնորհեաց  
Մեծն Կոստանդիանոս կայսրն  
Եկեղեցոյ:

ՅԵՂԵԱԼ Ի ԼԱՏԻՆ ԲՆԱԳՐԷ Ի ՀԱՅ ԲԱՐՔԱՌ:

## ԳԻՈՍ ԳԱՊ Ժ.

Ամենայն հաւատացելոց ի Քրիստոս,  
որոնք այս մեր թղթոյն պիտի տե-  
ղեկանան, ողջոյն և Առաքելական  
Օրհնութիւն:

Մեծ և բարեկեան դէպքին յիշատակը, որով  
վերջապէս, ասկէ տամն և վեց դար առաջ, եկե-  
ղեցոյ խաղաղութիւն շնորհուեցաւ, մինչ գերա-



զանց ուրախութեամբ կը լեցնէ բոլոր կաթողիկեայ ազգերը, և զանոնք շերմեռանդական գործեր ընելու կը հրաւիրէ, նախ և յառաջ կը դրդէ զմեզ բանալու երկնային շնորհաց զանձերը, որպէս զի, այսպիսի հանդիսաւորութեան պատճառաւ, ընտիր և առատ պտուղներ քաղեն ի Տէր: Յիրաւի պատշաճ է և բարեպատեհ տօնել Մեծն Կոստանդիանոս կայսեր ի Միլան հրատարակած չրովարտակը. ապաքէն խաչի փառապանծ դրօշիւ յաղթանակ կանգնեց Մաքսենտիոսի դէմ, և վերջ տալով Քրիստոնէից դէմ յարուցուած դժընդակ հալածանաց, պարգևեց անոնց այն ազատութիւնը, որուն գինն եղաւ աստուածային Փրկչի և Մարտիրոսաց արիւնը:

Պատերազմող եկեղեցին, վերջապէս, ընդունեցաւ առաջինը այն յաղթութեանց՝ որ ամէն դարու մէջ կը յաջորդեն ամէն տեսակ հալածանաց. և այդ օրէն ի վեր, միշտ, առաւելագոյն բարիք ընձեռեց մարդկային ընկերութեան: Ուրովհետև մարդիկ, հեազհետէ կուռքերու սնտոի պաշտամունքը թողլով, օրինաց, վարուց և կրթութեան մէջ, միշտ առաւել ևս ընդգրկեցին Քրիստոնէական կենաց կանոնը. որով արդարութիւնն և սէրը միանգամայն ծաղկեալ բարգաւաճեցան աշխարհիս վրայ: Վասն որոյ պատշաճ կը համարինք որ այս երանաւէտ պարագայիւ, յորում կը յիշատակուի այսպիսի մեծ եղելութիւն

մը, բազմապատկուին աղօթքներ առ Աստուած, առ սուրբ Կոյնն Աստուածածին, միւս սուրբերուն, մանաւանդ առ սուրբ Առաքեալս, որպէս զի համայն ազգ և ազինք, նախանձախնդիր եկեղեցւոյ փառաց և պատուոյ, այնպիսի Գերագոյն Մօր գիրկը ապաւինելով ի բաց մերժեն այն մոլորութիւններ, որոնցմով՝ հաւատքի անմիտ թշնամիները՝ կը ջանան անոր ջինջ պայծառութիւնը մթացնել. պատուեն Հոովմայ Քահանայապետը ամենամեծ հպատակութեամբ, և վերջապէս աներկբայ մտօք ճանչնան, յանձին կաթողիկէ եկեղեցւոյ, պաշտպան և նեցուկ ամէն բանի: Այն ատեն կարելի է յուսալ, որ մարդիկ սևեռելով աչքերնին փրկարար խաչի վրայ, այս փրկարար նշանով կը յաղթեն զխոլին թէ Քրիստոնեայ անուան հակառակորդներուն և թէ սրտի անզուսպ ցանկութիւններուն: Եւ որպէս զի խոնարհ աղօթքներն, որ այս բազմադարեան հանդիսի առթիւ պիտի մատուցուին ի սփիւռս կաթողիկէ աշխարհի, առաւելապէս շահեկան ըլլան հաւատացելոց հեգեոր բարւոյն, որոշեցինք Յոբելինի եղանակաւ, զանոնք լիակատար ներողութեամբ ճխացնել. յորդորելով ջերմապէս եկեղեցւոյ բոլոր զաւակները, միացնելու՝ իրենց ազաչանքները և շերմեռանդական գործերը՝ մերիներուն և առատապէս օգտուելու այն շնորհքէն, որ իրենց կ'ընծայուի այս Յոբելեանով, ի-



րենց հոգեկան շահերուն և կրօնի օգտին համար։  
Վասն որոյ վստահելով յողորմութիւնն Ամե-  
նակարողին Աստուծոյ, և իշխանութեամբ երա-  
նելի Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի և զօրու-  
թեամբ արձակելու և կապելու իշխանութեանն,  
որ Մեջ, թէպէտ և անարժան, յաստուածուստ  
շնորհուած է. նաև լսելով յարգելի Եղբարց Մե-  
րոց, սրբոյ Հռովմէական եկեղեցւոյ հաւատա-  
պաշտպան Ծիրանաւորաց խորհուրդը, ներկայիւս  
կու տանք, կը շնորհենք լիակատար ներողութիւն  
իրենց բոլոր մեղքերուն, Յոբելեանի ձևով, եր-  
կու սեռի ամէն և իւրաքանչիւր հաւատացեալ-  
ներուն, որ կը բնակեն մեր բարերար քաղաքին  
մէջ կամ հոն կու գան, սկսեալ ներկայ տարւոյս  
նոր կիրակիէն, որ ժամանակ պիտի սկսին եկե-  
ղեցւոյ խաղաղութեան յուշարար բազմադարեան  
հանդէսները, մինչև սբ. Կուսի Անարատ յղու-  
թիւնը, փաղառութեամբ. պայմանաւ, որ երկու  
անգամ այցելեն սբ. Յովհաննու Լատերանեան  
եկեղեցին, սբ. Պետրոսի գլխաւորի Առաքելոցն,  
և սբ. Պօղոսի արտաքոյ պարսպաց. հոն սակաւ  
մի ժամանակ մնալով աղօթեն ըստ մեր դիտա-  
ւորութեանց, Կաթողիկէ եկեղեցւոյ և Առաքե-  
լական ս. Գանի բարգաւաճման և պայծառու-  
թեան համար, հերետիկոսութեանց ջնջման, և  
մոլորեալներուն դարձի համար, քրիստոնեայ  
իշխաններու միութեան, ամբողջ հաւատացեալ

ժողովրդեան խաղաղութեան և միութեան հա-  
մար. և նոյն ժամանակամիջոցին, ապաշխարու-  
թեան խորհրդով իրենց մեղքերը ջնջելով, մեր-  
ձենան ի սբ. Հաղորդութիւնն, և ասոնցմէ զատ,  
ողորմութիւն մը ընեն, իրենց կարողութեան  
համեմատ, աղքատներուն, կամ եթէ կը նախա-  
դասեն, յօգուտ բարեգործական ձեռնարկներու։  
Իսկ անոնց, որոնք չեն կրնար Հռովմ գալ, կը  
շնորհենք նոյն լիակատար ներողութիւնը, միայն  
թէ, միևնոյն ժամանակամիջոցին, վեց անգամ  
անպատճառ այցելեն իրենց տեղոյ եկեղեցին,  
կամ եկեղեցիները, որ մի անգամ ընդ միշտ  
պիտի որոշուին վիճակաւորէն. և կատարեն ամ-  
բողջովին միւս բարեպաշտական հրահանգները,  
զորս վերը նշանակեցինք։—Կը շնորհենք նաև  
մերձեցնելու նոյն լիակատար ներողութիւնը  
այն հոգիներուն, որոնք Աստուծոյ հետ միացած  
սիրով ելեր են աշխարհէս։ Կը շնորհենք դար-  
ձեալ, որ նաւորդները և ճանապարհորդները, երբ  
հասնեն իրենց բնակավայրը, կամ ժամանեն  
իրենց ճանապարհին մէկ որոշ տեղը, կարենան  
շահել նոյն ներողութիւնը, կատարելով վերոյի-  
շեալ ջերմեռանդական հրահանգները և այցե-  
լելով վեց անգամ իրենց գտնուած տեղոյն  
մայր, կամ գլխաւոր, կամ ժողովրդապետական  
եկեղեցին։

Երկու սեռի ևս կրօնաւորք, նոյն իսկ ար-



գելափակները, և ամէն աշխարհականները և աշխարհիկ կամ կրօնաւոր եկեղեցականները, որ կամ գերութեան մէջ, կամ բանտը գտնուելով, և հիւանդութենէ կամ այլ ինչ պատճառէ արգելուելով, չեն կրնար կատարել վերը դրուած գործերը, թող դիմեն իրենց խոստովանածօրը, որպէսզի փոխէ նոյն գործերը, կամ ուրիշ ժամանակի թողու, ապաշխարողին հնարաւորութեան համեմատ: Կը շնորհենք նոյնպէս, որ խոստովանահայրը, կարենայ սբ. Սորհրդուոյն մերձենալէ տնօրինել դեռ ևս առաջին հաղորդութիւն չառնող տղաները:

Կը շնորհենք որ, ամէն և իւրաքանչիւր հաւատացեալը, ըլլայ աշխարհական, ըլլայ եկեղեցական, աշխարհիկ և կրօնաւոր կղերէ, որ և է, նոյն իսկ յատուկ յիշատակութեան առանձնաշնորհը ունեցող կարգէ կամ հաստատութենէ, կարենայ ընտրել, Յորեկեանի ներողութիւնը վաստըկելու համար. հաւանեալ (այսինքն խոստովանանք լսելու արտօնութիւն ունեցող) աշխարհիկ կամ կրօնաւոր խոստովանահայր մը: Պիտի կրնան նոյնպէս իրենց խոստովանահայր մը ընտրել կուսանք, մայրապետներ, նորընծայներ և ուրիշ միասին ապրող բարեպաշտ կանայք, միայն թէ խոստովանահայրը մայրապետաց համար հաւանեալ ըլլալու է:

Սոստովանահայրը, այս կերպով ընտրուելէ

զինի, խոստովանանքի և պատուիրեալ գործերու կատարման համար որոշուած Յորեկեանի ամբողջ տևողութեան միջոցին, պիտի կարենայ ապաշխարողը արձակել, այս անգամուայ համար միայն և յաճենի խոսովանութեան միայն, ամէն բանադրանքէ, կախակայութենէ և ուրիշ եկեղեցական վճիռներէ և դատակնիքներէ, որ տրուած և իբր պատիժ սահմանուած են յիրաւանց կամ ի մարդոյ, որ և է պատճառաւ, նաև անոնցմէ որ վերապահեալ են տեղեաց վիճակաւորներու և Մեզի, կամ սուրբ Աթոռին, նոյն իսկ առանձինն եղանակաւ, և որոնց արձակումը հասարակօրէն չի բովանդակուիր ամենէն ընդարձակ առանձնաշնորհմանց մէջն անգամ: Նոյնպէս պիտի կարենայ, փրկարար և պատշաճ ապաշխարանք մը դնելէ և իրաւանց միւս տրամադրութիւնները լրացնելէ յետոյ, արձակել ամէն մեղքէ, ոճիրներէ՝ որչափ ծանր ըլլան և սոսկալի և նոյն իսկ վերապահեալ վիճակաւորներու, Մեզի և Առաքելական գահուն:—Գալով հերետիկոսութենէ դարձողներուն, ասոնք ըստ կանոնական իրաւանց, իրենց մոլորութիւնները յետսկոչում ընելէ վերջը, կ'արձակուին:

Սոստովանահայրը պիտի կարենայ նաև փոխել ուխտերն և երդումները, նոյն իսկ առաքելական գահուն վերապահեալները, ուրիշ բարեպաշտական գործերու,—ի բաց առեալ սակայն ող-



ջախտոնութեան և կրօնաւորութեան ուխտերը և երբորդի մը նկատմամբ պարտականութիւն բովանդակողները, — և մեղքէ զգուշանալու համար դրուած ապաշխարութեան ուխտերը, միայն թէ խոստովանահօր կողմէ եղած փոխանակութիւնն ալ նոյնպէս մեղքէ նախազգուշանալու մասին նուազ ազդեցիկ չըլլայ: Սոստովանահայրը պիտի կարենայ նաև տնօրինել սուրբ Աստիճաններով ճոխացած ապաշխարողները, եթէ կրօնաւոր իսկ ըլլան, ամէն ծածուկ անկանոնութենէ, որ կրնայ արգելք ըլլալ նոյն Աստիճաններուն ընդունելութեան: Ներկայիւս չենք տար իշխանութիւն տնօրինելու՝ կամ տնօրինել տալու՝ միւս անկանոնութիւններն, որ յառաջ կուգան կամ ուճիրէ, կամ թերութենէ, կամ հրապարակական՝ կամ ծածուկ՝ յանցանքէ մը և որևիցէ կերպով կըրուած յարակից անընդունակութենէ կամ անբաւականութենէ. և վերստին ատակ ընելու Աստիճաններու գործածութեան կամ բարձրագոյն աստիճաններու ընդունելութեան, նոյն իսկ յատենի խոստովանութեան: Նոյնպէս չենք փոխեր մեր Երջանկայիշատակ նախորդ Բենեդիկտոս ԺԴ-ի, «Սորհուրդ Ապաշխարութեան» բռներով սկսող և մասնաւոր յայտարարութիւններ պարունակող սահմանադրութիւնը: — Նոյնպէս ներկայիւս չենք փոխեր անոնց կանոնական կացութիւնը, որ Մեր կամ սուրբ Գահին կամ Ա-

ռաջնորդի մը և եկեղեցական դատաւորի մը կողմէ՝ յախանէ յանուանէ՝ բանադրուած, կախակալուած, արգելուած, կամ յիշեալ դատակնիքներու մէջ ըստ օրինաց ինկած ծանուցուած են հրապարակաւ. միայն թէ, Յոբելեանի միջոցին, հատուցում և իրաւախօհութիւն ըրած չըլլան: Եթէ Յոբելեանի ժամանակ, չեն կըցած, իրենց խոստովանահօր դատման համեմատ, հատուցանել, կը շնորհենք որ կարենան արձակում առնուլ յատենի խոստովանութեան, լոկ Յոբելեանի ներողութիւնը ստանալու համար, պարտադրութեամբ հարկ եղածը կատարելու, հազիւ կարելի ըլլայ: Ասոր համար զօրութեամբ սուրբ հնազանդութեան և ներկայիս պարունակութեամբ խստիւ կը հրամայենք և կը պատուիրենք ամէն տեղեաց վիճակաւորներու, իրենց փոխանորդներուն և պաշտօնեայներուն, և ասոնց չգտնուած պարագային, ամէն հոգ հոգւոց ունեցողներուն, որ այս թղթէն ձեռագիր կամ տպագիր օրինակներ ընդունելուն պէս, հրատարակեն և հրատարակել տան իրենց եկեղեցիներուն, թեմերուն, գաւառներուն, ոստաններուն, քաղաքներուն և ուրիշ տեղերու մէջ. նշանակեն Աստուծոյ ժողովրդին այն եկեղեցիներ զորս այցելելու են. և Աստուածային խօսքին քարոզութեամբ պատրաստեն զայն Յոբելեանը վաստկելու: — Հակառակ ամէն առաքելական սահմանադրութեանց



և կարգադրութեանց, յատկապէս անոնց՝ որոնցմով արձակումն տալու իշխանութիւնը, ինչ ինչ պարագաներու համար, վերապահեալ է ժամանակի Քահանայապետին, այնպէս որ ներողութեանց կամ իշխանութեանց նմանօրինակ կամ տարբեր շնորհումները մէկու մը չկարենան տրուիլ, միայն թէ այդ մասին որոշ յիշատակութիւն չըլլայ կամ մասնաւոր փոփոխում մը չի կատարուի. հակառակ նոյնպէս նմանութեամբ ներողութիւնները շնորհելու խափանարար կանոնին. հակառակ ամէն սահմանադրութեանց, որ և է կարգերու, Միաբանութեանց և հաստատութեանց, նոյն իսկ անոնց որ երգումով, առաքելական հաստատութեամբ կամ ուրիշ որ և է նուիրագործումի եղանակաւ ճոխացած են. և նոյնպէս հակառակ ամէն սովորութիւններու, առանձնաշնորհումներու, շնորհագիրներու, առաքելական թուղթերու, որ տրուած, հաստատուած և նորոգուած են որևէ եղանակաւ, այս կարգերուն, Միաբանութեանց և հաստատութեանց և իրենց բոլոր անգամներուն: Արդ այս ամենուն և իւրաքանչիւրին, նոյն իսկ անոնց զորս պէտք էր իրենց ամբողջ բովանդակութեան համար յիշել յատկապէս, մասնաւորապէս, որոշակի, առանձնակի, և սչ լոկ ընդհանուր համազօր բանաձևերով, կամ որոց մասին ուրիշ վերապահեալ ձև մը գործածելու էր, Մենք, նկատելով անոնց բովանդակութիւնը իբրև ըստ բա-

ւականի բացատրուած ներկայ թղթով, և անոնց մասին գործածուելիք աւանդական ձևը իբրև պահուած, կը ջնջենք զանոնք մասնաւորապէս յակնէ յանուանէ, այս անգամուան համար, վերոյգրեալ արդիւնքը ստանալու նպատակաւ. հակառակ ամէն ներհականներու:—Վերջապէս, որպէս զի ամէնքը տեղեակ ըլլան մեր ներկայ թղթոյն, որուն ամէն տեղ հասնելը կարելի չէ, կ'ուզենք որ ամենուրեք և ամէն ժողովուրդներու քով, միևնոյն հաւատք ընծայուի այս թուղթին՝ տպագրեալ և հրապարակական նօտարի մը ստորագրութիւնը և եկեղեցական պաշտօնէի մը կնիքը կրող՝ օրինակներուն և պատճէններուն:

Տուեալ ի Հոովմ առ Սրբոյն Պետրոսի ընդ Մասնեաւ Չկնոսի յՅ և Մարտի, 1913 ամի. ի սասնեորդում ամի Քահանայապետութեան Մերոյ:

Նորին Սրբութեան առանձին հրամանաւ.

Ռ. Կարդինալ Մէրի-Տէլ - Վալ Պետական Քարտուար:

Ի հաստատութիւն հաւատարմութեան հայերէն թարգմանութեան ի լատին ընագրէ.

Ի Տփղիս, ի գիւնիս միւրում, ի 20-ն նոյնմբերի, 1913 ամի.

Սարգիս Վ. Տէր Աբրահամեան, Առաջնական Կառավարիչ ամենայն Հայ-Կաթողիկէից ի Ռուսիա:

S. 4.



## ՍՍՐԳԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ

### ՏԵՐ-ԱԲՐԱՀԱ ՄԵԱՆ

ողորմութեամբն Աստուծոյ և շնորհիւ  
առաքելական ս. Գահի, Առաքելական  
Կառավարիչ ամենայն Հայ-Կաթողի-  
կէից ի Ռուսիա.

Մեծարգոյ մեծարգոյ ժողովրդա-  
պետ քահանայից մերոց եւ հա-  
մայն աատուածաւեր եւ քարե-  
պաշտ ժողովրդեան մերոյ ողջոյն  
ի Քրիստոս.

Թուղք քոջաբերական:

Հոովմէական կաթողիկէ սուրբ եկեղեցին իբ-  
րև գորովագութ մայր մը գուրգուրալով իւր հա-  
րազատ գաւակաց վրայ, ամէն ժամանակ, պատեն  
առթիւ, զանոնք հոգևոր բարիքներով լեցնելու  
միջոցները հայթայթած է, բանալով երկնային  
շնորհաց գանձերը, որպէս զի անկէ առատ պտուղ-  
ներ քաղեն Տերամբ:

Այս բարենշան առիթներէն մինն հանդիսա-  
ցաւ Մեծն Կոստանդիանոսի՝ ասկէ հազար վեց  
հարիւր տարի առաջ, Քրիստոսի սուրբ եկեղե-  
ցոյ շնորհած խաղաղութեան հրովարտակին յի-  
շուսակը:—Երեք հարիւր տարի սուրբ եկեղեցին  
հալածուեցաւ հեթանոս կայսրներէն, բայց ան-  
վեհեր արիութեամբ, բարեպաշտ Քրիստոնեայք,  
հաստատուն մնացին իրենց աստուածատուր Հա-  
ւատքին վրայ, առանց վախնալու անթիւ նահա-  
տակաց՝ կրօնքի համար թափած՝ արեան գետե-  
րէն: Վերջապէս հասաւ ժամանակ, տապալեցան,  
ինկան, զնացին հեթանոս՝ Քրիստոնէութեան եր-  
դուեալ թշնամի ինքնակալները, և անոնց յա-  
ջորդեց բարեպաշտ ինքնակալ Մեծն Կոստան-  
դիանոս, որ երկնային նրաջքով հաւատաց Քրիս-  
տոսի Աստուծոյ մերոյ և Միլան քաղաքէն զրեց  
իրեն՝ յիշատակաց արժանի՝ նրովարտակը 313-ին,  
որ երեքդարեան դառն հալածանաց տապալումը  
կը հոչակէր:

Հրովարտակը, զոր կը քաղենք Եւսեբիոս  
աշխարհահռչակ պատմագրի տառերորդ գրքէն,  
հինգերորդ դիսէն, հետևեալն է.

«Մենք Կոստանդիանոս, Աւգոստոս և Լիկի-  
«նիոս Աւգոստոս, երջանկապէս գումարեալ ի  
«Միլան, խորհելով ընդհանուրին ապահովու-  
«թեանը և օգտին նկատմամբ, արժան համարե-  
«ցինք, և թէ մեր գլխաւոր պարտականութեանց



«մինն է, կանոնաւորել ինչ որ աստուածային  
 «պաշտամանց կը վերաբերի, և շնորհել՝ Քրիս-  
 «տոնէից, որպէս նաև մեր բոլոր միւս հպատա-  
 «կաց՝ ազատութիւն հետևելու իրենց կրօնից. որ-  
 «պէս զի հրաւիրեմք երկնային երախտիքն մեր  
 «և մեր կայսրութեան վրայ: Ուստի որոշեցինք  
 «չը մերժել որ և է անձի՝ միջոցներ, որոնցմով նա  
 «կարող ըլլայ սրտով և զգացումով հետևիլ այն  
 «կրօնքին, զոր յարմար պիտի դատէ, այն նպա-  
 «տակաւ, որ գերագոյն Աստուածը՝ զոր կը պաշ-  
 «տենք՝ շարունակէ զեզուլ մեր վրայ իր շնորհք-  
 «ները»:

Ոսօքն ուղղելով պաշտօնէից, կը յարէ. «Հա-  
 «կառակ ամէն ժամանակաց՝ զորս ի սկզբան  
 «ընդունած էք, հաճելի է մեզ այժմ պարզապէս  
 «և անպայման կարգադրել թէ, ո՞վ որ կուզէ  
 «դաւանել Քրիստոնէական կրօնքը, կարող է  
 «դայդ առնել, առանց ո՞ր և է հալածանաց և նե-  
 «ղութեան: Զայս յայտնապէս Ձեզ կը ծանուցա-  
 «նենք, քանզի շնորհած ենք ընդհանրապէս Քրիս-  
 «տոնէից կատարեալ ազատութիւն հետևելու ի-  
 «րենց կրօնից: Սահմանած ենք նաև թէ, վերա-  
 «դարձնելու էք Քրիստոնէից անմիջապէս առանց  
 «որ և է զին պահանջելու և առանց դժուարու-  
 «թեան այն տեղերն, ուր իսկզբան Քրիստոնեայք  
 «կը գումարուէին և որոնց համար դուք ընդու-  
 «նած էք տարբեր հրամաններ, և զոր գնած են

В НАСТОЯЩЕЕ  
 ИЛИ СТИХИТА  
 ВОСТАНОВЛЕНА  
 Академии наук

«կամ մասնաւոր անձի» կամ արքունական  
 «գանձն սեպհականացուցած է, կամ որ և է անձ  
 «իւրացուցած է»:  
 «Նոյնպէս թէ որ մէկն ընդունած ըլլայ գա-  
 «նոնք իբրև նուէր, անյապաղ վերադարձնելու է:  
 «Թէ պարզերնկալը, թէ գնող անձինք, թող զի-  
 «ւան գաւառի փոխանորդին ընդունելու, զոր ինչ  
 «կը յուսան մեր բարութենէն: Անմիջապէս, ու-  
 «զրեմն դուք կը վերադարձնէք Քրիստոնէից այդ  
 «տեղերը. և որովհետև յայտնի է որ, Քրիստո-  
 «նեայք ունին նաև ուրիշ ինչքեր, որոնք կը պատ-  
 «կանին իրենց հասարակութեան, այսինքն եկե-  
 «ղեցիներուն և ոչ թէ մասնաւոր անձանց, կը  
 «ջանանք վերադարձնել տալ այդ հասարակու-  
 «թեան այն բոլոր ինչքերը, առանց հակառա-  
 «կութեան կամ դժուարութեան, և անոնք որ  
 «առանց հատուցման վերադարձուցած են, ազատ  
 «են թախանձելու մեզի, փոխարինում ունենալու  
 «համար: Կուզենք որ այս խնդրոյն մէջ ձեր  
 «պաշտօնը անյապաղ և ազդեցիկ կերպով կա-  
 «տարէք, որպէս զի աստուածային բարութիւնը,  
 «որոյ երախտիքն արդէն բազմաթիւ առիթներու  
 «մէջ վայելած ենք, չի դադարէ յաջողութիւն  
 «պարգևելէ մեզ, ինչպէս նա և բոլոր ժողովրդ-  
 «րոց: Որպէս զի այս օրէնքը ամենուն յայտնի  
 «ըլլայ, ձեր հրամանաւ զայն ամենուրեք կախել  
 «կու տար, որով և ոչ մէկը կարող ըլլայ զինք

36083-66

МЭС УНБ ФРЛГУРУ  
 Г. С. Библиотек  
 ЗУУН-Арм ССР  
 И. М. А. МЯСИАНИ  
 У. УБУУНУНУНУНУ



«գերծ համարել անգիտութեան պատրուակաւ»  
(Եւսեբ. Գիրք Ժ. Գլուխ 5):

Ահա, Մեծարգոյ եղբարք և սիրեցեալ ժողովուրդ, այս հրովարտակին յիշատակն է, որով Քրիստոսական եկեղեցւոյն ազատութիւն շնորհուեցաւ, և այս 1913 թուին մէջ լրացաւ այս հրովարտակի հրատարակուելուն հազար վեց հարիւր տարին. ահա այս հանգամանքն է որ դրդեց, զՊիոս տասներորդ սրբազան Պապը ծայրագոյն Քահանայապետը, այդ մեծ և յիշատակաց արժանի երանաւէտ «Եղեղութիւնը» աօնել ընդհանուր կաթողիկէ ազգաց մէջ մեծ հանդիսութեամբ և մեծ Յորեյինի ձեւով եւ եղանակաւ. որպէս զի հաւատացեալները այս երջանիկ պարագային մէջ երկնային շնորհաց կենսատու գանձերէն առատ պտուղներ քաղեն:

Այս առթիւ երիցս երանեալ սրբազան Քահանայապետն մեր Պիոս Ժ. իւր Առաքելական թղթովը կը հրաւիրէ զմեզ, բոլոր հաւատացելոց հետ, ջերմագին կերպով առ Աստուած աղօթելու և բարեպաշտական գործեր ի գործ դնելով, այս Յորեյեանը օգտաւէտ ընել, թէ մեր ներկայ և թէ հանդերձեալ կենաց համար: Այդ Առաքելական կոնդակին կարևորութիւնը ի նկատի առնելով, թարգմանութեամբ հրատարակեցինք և ներկայիւս կը պատուիրեմք Մեծարգոյ Մեծարգոյ Աւագաց և ժողովրդապետ Քահանայից, որ նոյն կոնդակի

մէջ պարունակուած հաւատացելոց պատկանեալ գլխաւոր կէտերը՝ թէ կիրակի և թէ լուր օրերը երբ ժողովրդեան բազմութիւն կայ եկեղեցւոյ մէջ, պարզեն և մեկնեն ժողովրդեան, յորդորելով միանգամայն օգտուելու այն փրկարար գանձերէն, զորոնք եկեղեցին, արտաքոյ կարգի այս օրերուս մէջ, ամենուն կը բաշխէ առատօրէն: Այս երկնատուր Յորեյինի առթիւ բովանդակ կաթողիկէ աշխարհը զորդեցաւ, ոտքի ելաւ, բազմաթիւ ուխտաւորներու այցելութիւնը՝ այս տարուայ նոր կիրակիէն սկսեալ՝ կը շարունակէ դէպ ի Հռովմ, Քրիստոսեայ քաղաքաց մայր. այս եռանդը, որ ամէն տարի ի սեամս Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, յոտս փոխանորդին Քրիստոսի, կը քաշէ հաւատացեալս աշխարհիս չորս ծայրերէն, այս տարի մանաւանդ կը շեշտուի ևս առաւել՝ եկեղեցւոյ Ազատութեան վեցասականերորդ դարադարձին առթիւ, Յորեյեան ներողութիւնը ի Հռովմ շահիլ կարենալու նպատակաւ: Ինչպէս Անգղիոյ, Գերմանիոյ, Գաղղիոյ, ամէն քաղաքներէն և այլն, այժմ նաև Ամերիկայի հեռաւոր վայրերէն սկսած են խումբ խումբ կաթողիկեայք, դիմել դէպի Հռովմ Յորեյեան ներողութիւնը հոն վասակելու: Մենք որ անձեռնհաս ենք այն յաւիտենական քաղաքին մէջ Յորեյինի սուրբ շնորհաց մասնակցելու, գոնէ ըստ շնորհելոյ սրբազան Պապին մերոյ, ջանանք ամենքնիս





ալ մեր բնակավայրերուն մէջ՝ անկէ օգտուելու։  
Առաքելական կոնգակի բովանդակութիւնը և  
ներողութիւն վաստակելու պայմանները բացա-  
տրելէս յառաջ, արժան է հակիրճ կերպով բա-  
ցատրել Յոբելեան բառին մեկնութիւնը, և  
Յոբելեան ներողութեան ճշգրիտ իմաստը։

### ՅՈԲԵԼԵԱՆ

Յոբելեան բառը երբայեցերէն յոբել, կը նշա-  
նակէ ուրախութիւն, թողութիւն, ազատութիւն։  
Հրեայք ամէն յիսուն տարին անգամ մը կը կա-  
տարէին Յոբելեանը «սրբեսջիք զամն յիսներորդ  
տարւոյն» (Ղևտ. ԻԵ. 10)։ Այս առթիւ ստա-  
ցուածները կը գառնային իրենց նախկին տէրե-  
րուն, պարտքերէն կ'ազատէին և գերիներուն ա-  
զատութիւն կը շնորհուէր։ Այժմ կաթողիկէ ե-  
կեղեցին Յոբելեանը կը կատարէ ամէն քսանե-  
հինգ տարին մի անգամ և կ'ըսուի սուրբ (սարթ),  
այդ Յոբելեանի տարին։ Յոբելեանի առթիւ կը  
շնորհուի միշտ լիակատար ներողութիւն։

### ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆ

Բայց ի՞նչ ընելու է Յոբելեանի ներողու-  
թիւնը շահելու համար։

1. Պէտք է կատարել իւրաքանչիւր Յոբե-  
լեանի համար նշանակուած ջերմեռանդակակն  
գործերը։

2. Կարելի է խոստովանիլ և հաղորդուիլ  
սկիզբը, կամ յընթացս Յոբելեանի, և կամ Յոբե-  
լեանի համար որոշուած օրերուն վերջին օրը։  
Սակայն, որովհետև վերջին ջերմեռանդակակն  
գործը, պէտք է կատարուի շնորհաց վիճակի  
մէջ, լաւ է ամենավերջը կատարել այս պար-  
տականութիւնները։ Լաւագոյն կ'ըլլար սկիզբն  
ևս խոստովանիլ և հաղորդուիլ, կամ զոնէ խոս-  
տովանիլ, շնորհաց վիճակի մէջ ըլլալու համար։

3. Եթէ բազմաթիւ եկեղեցիներ որոշուին  
այցելութեան համար, պէտք է նոյն օրը կատա-  
րել բոլոր եկեղեցեաց այցելութիւնը։ Թէ որ  
բազմութեան պատճառաւ մուտքն անկարելի  
ըլլայ եկեղեցւոյ մէջ, բաւ է նոյն իսկ զբան  
քովը աղօթել։

4. Գիտնալու է, ներողութիւն շահելու հա-  
մար ընդհանրապէս օրը կը սկսի արեւու մար մըս-  
նելէն վերջը՝ մինչև երկրորդ օրուայ արևու  
մուտքը։ Հետևաբար կարելի է արևու մար մըս-  
նելէն վերջը կատարել նոր այցելութիւն եկե-  
ղեցեաց մէջ։

5. Ներողութիւնը կարելի է մերձեցնել Քա-  
լարանի հոգւոցն ի նպաստ ևս, եթէ քահանա-  
յապետական կանդակի մէջ յիշուած է։

Տեսնենք այժմ թէ ի՞նչ է ներողութիւն։

1. Ներողութիւնն է ժամանակաւոր պատժոյ  
ենրհումն։ Ապաշխարութեան սբ. խորհուրդը



կը ջնջէ մկրտութենէ վերջը գործուած մեղքերը  
և կը սրբէ հոգւոյ վէրքը, զոր մեղքը պատճա-  
ռած է: Խոստովանանքով կը թողուի յանցանքը  
և յաւիտենական պատիժէն մարդս կ'ազատի.  
բայց ժամանակաւոր պատիժը կը մնայ, զոր  
պէտք է կամ այս աշխարհիս մէջ կրել և կամ  
հանդերձեալ կեանքի մէջ մահուընէ վերջը:  
Քրիստոս տէրն մեր, տալով եկեղեցւոյ լիուրի  
իշխանութիւն արձակելու և կապելու ինչ որ  
մեղաց կը վերաբերի, ուրեմն ըսել է թէ եկե-  
ղեցին կարող է նաև կատարեալ կամ մասնա-  
ւոր կերպով արձակել մեղաց ժամանակաւոր  
պատիժներէն իսկ. այսինքն ներել մեղաց ժա-  
մանակաւոր պատիժը, մէկ խօսքով, ներողու-  
րիւն ատել:

2. Երկու տեսակ ներողութիւն կայ. մէկը  
կ'ըսուի լիակատար ներողութիւն, իսկ միւսը՝  
մասնական ներողութիւն:

Լիակատար ներողութիւնն է մեղաց ժա-  
մանակաւոր պատիժ լիւ ընդհուրմ:

Մասնական ներողութիւնն է՝ ժամանակա-  
ւոր պատիժ մի մասի ընդհուրմ միայն: Մաս-  
նական ներողութիւնն է, զորօրինակ, 40 օրուայ,  
հարիւր օրուայ, 300 օրուայ են., ներողութիւնը,  
որոնք կը համապատասխանեն կանոնական ա-  
պաշխարութեան 40, 100, 300 են. օրուայ ա-  
պաշխարանաց: Մասնական ներողութեան օրերը

ոչ թէ կը համապատասխանեն քաւարանի ա-  
պաշխարանաց օրերուն, այլ կանոնական ապաշ-  
խարութեան, զոր եկեղեցին ի հնուէն մեղաւո-  
րաց կուտար. զորօրինակ, պատարագի ատեն  
խօսողին՝ տասն օր պահք կը պատուիրէր, են. այս  
տասնօրեայ ապաշխարանաց կը համապատաս-  
խանէ տասն օրուայ ներողութիւն: Սակայն թէ  
ներողութիւնը որքան ժամանակուայ կը համա-  
պատասխանէ քաւարանի ապաշխարանաց, դա  
միայն Աստուած գիտէ:

Յորելեանի և ներողութեան համառօտ բա-  
ցատրութիւն գրելնէս վերջը, հոս կը դնենք Ա-  
ռաքելական կոնդակի բովանդակութեան էական  
հրահանգները եւ պայմանները, ներկայ Յորե-  
լեանի լիակատար ներողութիւնը ստանալու հա-  
մար, որ ըստ հրամանի սրբազան Պապի կրնայ  
մերձեցուիլ նաեւ քաւարանի հոգոց:

### ԳԻՏԵԼԻ Է. Ա.

Ի հրամանէ սրբազան ծայրագոյն Քահա-  
նայապետի, Յորելեանը առ մեզ կը սկսի մեր  
վիճակի համար, ներկայ տարւոյս 1913 դեկտեմ-  
բեր իննէն, ս. Կուսի Անարատ Յղութեան օրէն  
մինչեւ ց25-ն դեկտեմբերի, ցօրն ծննդեան  
տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի փաղառու-  
թեամբ: Թէպէտ և ըստ Առաքելական կոնդակի,



այս տարուայ նոր կիրակիէն սկսեալ մինչև Անարատ Յիւլիթեան օրը վերջանալու էր, սակայն առանձին արժանութիւն ստացանք ՆՈՐԻՆ ՍԸՐԲՈՒԹԵՆԷՆ, որ ՏԵԻՔ ՅՈՒՅԷԼԵԱՆԸ ՄԻՆՉԵԻ ՍԲ. ԾՆՈՒՆԴԸ. ի նկատի ունենալով, մեր ժողովրդեան համար աւելի մատչելի լինելը Յիսուսի Քրիստոսի ծննդեան սբ. օրուայ նախընթաց օրերը:

### ԳԻՏԵԼԻ Է. Բ.

Յօրեղեանի առթիւ լիակատար ներողութիւն շահելու համար, հարկաւոր են հետեւեալ չորս պայմանները, զորոնք Սրբազան Պապի կոնդակէն կը քաղենք.

1. Վեց այցելութիւնք.
2. Խոստովանանք.
3. Մեծնալ ի սբ. Հաղորդութիւն.
4. Ողորմութիւն.

Վեց այցելութեան համար կ'որոշենք Թիֆլիսու համար. 1-ն հայ-կաթողիկեայ սբ. Գրիգոր Լուսաւորչի մատուր, 2. Կուկիայի կաթողիկաց եկեղեցին, և 3. Միջին փողոցի կաթողիկաց եկեղեցին:

Յիշեալ մատրան և երկու կաթողիկեայ եկեղեցեաց, Անարատ յիւլիթեան օրէն սկսեալ, երկու այցելութիւնք պիտի կատարուին:

Արդունոյ մէջ Մայր եկեղեցւոյն, Խայրեթու եկեղեցւոյն և Կօլօրտոյի եկեղեցւոյն երկու այցելութիւնք պիտի կատարուին:

Պաթումայ մէջ հայ-կաթողիկաց եկեղեցւոյն և լատինածէս կաթողիկաց եկեղեցւոյն երեք երեք այցելութիւնք պիտի կատարուին:

Ախալցխոյ մէջ, սբ. Յովհաննու հայ-կաթողիկաց եկեղեցւոյն, սբ. Խաչի եկեղեցւոյն և պլանու Վերափոխման եկեղեցւոյ երկ-երկու այցելութիւնք պիտի կատարուին: Միւս քաղաքաց և գիւղերու մէջ, ի Ռուսական Կայսրութեան, ուր որ երկու կամ երեք կաթողիկեայ եկեղեցի կայ, կամ մատուր, անոնց մէջ հաւասար չափով վեց այցելութիւնք պիտի կատարուին:

Ուր որ մէկ եկեղեցի կայ, կամ մի մատուր, անոր մէջ վեց այցելութիւնք, վեց օրուայ մէջ պիտի կատարուին:

Եւ վերջապէս, ուր որ հրապարակական եկեղեցի չկայ և ոչ մատուր, հաւատացեալը կրնան ըստ իւրեանց զիւրութեան վերոյիշեալ վեց այցելութիւնք կատարել ուրիշ տեղ մը, ուր որ կաթողիկէ եկեղեցի կամ մատուր գտնուի:

### ԳԻՏԵԼԻ Է. Գ.

Հաւատացեալը, ամէն այցելութեան ժամանակ, քառորդի մը չափ պէտք է աղօթէ սրբա-



զան Քահանայապետի զիտաւորութեան: Չի բաւեր մտածական աղօթք, այլ բաւական է, որ ըսէն. հիևց «Հայր մեր», հիևց «Ողորդիս» և հիևց «Փառք հօր»:

Այցելել եկեղեցի մը, ըսել է. մտնել հոն Աստուծոյ երկրպագելու մտքով. մնալով դրանքով, եկեղեցին ժողովրդով լեցուն ըլլալու պատճառաւ, բարոյական մուտք կը համարուի. հոն կրնայ իւր պարտքը վաւերաբար կատարել:

### ԳԻՏԵԼԻ Է. Դ.

Հարկաւոր է ողորմութիւն, կամ աղքատներուն, կամ բարեգործական ձեռնարկներուն. ողորմութիւնն ըլլալու է ըստ կարողութեան իւրաքանչիւրի վիճակի. ուստի ինչ որ բաւական է աղքատի համար, չի կրնար բաւական ըլլալ հարստի համար: Հարկ չկայ որ մէկը անձամբ ընէ ողորմութիւնը, այլ ուրիշի միջոցաւ ալ. բայց պէտք է տեղեակ ըլլայ այն անձը՝ որու համար ողորմութիւնը կը տրուի. գորօրինակ, հայր մը կրնայ ողորմութիւն տալ, կնոջ և զաւակաց համար, անոնց յայտնելով. տէրը, ծառային համար. հարուստն, աղքատին համար, ևն.:

### ԳԻՏԵԼԻ Է. Ե.

Պէտք է խոստովանիլ և հաղորդուիլ այս

տարուայ Անարատ Յղութեան, դեկտեմբերի իննէն սկսեալ՝ մինչեւ դեկտեմբեր 25-ը, սուրբ Ժրնրնդեան օրուան երեկոյ. այդ ժամանակամիջոցին, հաւատացեալը ազատ է սուր որ կուզէ, որ կաթոլիկ եկեղեցւոյ մէջն որ կ'ուզէ, սր կաթողիկեայ և խոստովանանքի իրաւունք ունեցող բահանայն որ ուզէ, կրնայ անոր խոստովանիլ:

Գիտնալու է, որ չի բաւեր սրբապիղծ խոստովանանք, կամ ահամայ կերպով անվաւեր խոստովանանք, այլ հարկաւոր է վաւեր խոստովանանք զղջմամբ և առաջադրութեամբ. այնպէս որ մեկոց թողութիւն տրուի արձակմամբ խորհրդոյն շնորհիւ, այսինքն «ի գործոյ գործեցելոյ»:

### ԳԻՏԵԼԻ Է. Զ.

Սրբազան Քահանայապետը, ներկայ Յոբելեանը շահելու շնորհքը կ'ընէ նաև անոնց, որոնք գժբախգաբար հիւանդութեամբ կամ բանասարկութեամբ կը տառապին, կամ սրկիցէ եղանակաւ ծանր արգելքի մը ենթարկուած են, և վերոյիշեալ պարտաւորութիւնները կամ անոնցմէ մէկ քանիները չեն կրնար կատարել: Ուստի, այսպիսիներու համար, իրաւունք կը շնորհէ խոստովանահարց, որ կարող ըլլան նոյները փոխել ուրիշ յարմարագոյն բարեպաշտական գործոց, և



կամ նոյն ներողութեանց ստանալը ուրիշ մտա-  
կայ ժամանակի մը յետաձգել:

### ԳԻՏԵԼԻ Է. Է.

Սոստովանահարց շնորհուած արտաքոյ կար-  
գի իշխանութիւնները՝ մեղաց կապերէն արձա-  
կելու՝ առթիւ Յորելեանի:

Սրբազան Քահանայապետը՝ ամէն հաւատա-  
ցելոց լիուլի հրաման կուտայ, Յորելեանը շահե-  
լու համար, ընտրել սր և է քահանայ խոստովա-  
նելու համար, միայն թէ այդ քահանայն, պաշ-  
տօն ունենայ թէ ոչ, ունենալու է անպատեհ  
իւր թեմական վիճակաւորէն խոստովանի լսե-  
լու արժանութիւնը: Այդպիսի խոստովանահայրե-  
րու կուտայ իշխանութիւն, յատենի խոստովանու-  
թեան եւեթ, արձակել ամէն բանադրանքէ, կա-  
խակայութենէ եւ եկեղեցական դատակնիւ-  
որոնք տրուած են յիւրաւանց կամ Առաջնորդի մը  
կողմանէ, և որ և է պատճառաւ վերապահեալ  
են՝ կամ վիճակաւորներու, կամ սրբազան Պա-  
պին կամ սուրբ Աթոռոյ, նոյն իսկ առանձինն  
եղանակաւ. խոստովանահայրը փրկարար պատ-  
եան սպաշխարանք դնելէ յետոյ, պիտի կարե-  
նայ արձակում տալ ամենայն մեղաց, որչափ  
ալ ծանր ըլլան և սոսկալի և նոյն իսկ վերա-

պահեալ եպիսկոպոսաց, սրբազան Պապին և Ա-  
ռաքելական սուրբ Գահուն:

Քալով հերետիկոսութենէ դարձողներուն և  
ուրացողաց, ասոնք ըստ կանոնական իրաւանց  
իրենց մոլորութիւնը հերքելէ և անոնցմէ հրա-  
ժարելէ վերջը, կրնան արձակում ստանալ:

Դարձեալ խոստովանահայրը պիտի կարե-  
նայ նաև փոխել ուխտերն ու եղումներն, նոյն  
իսկ սրբազան Պապին վերապահեալ, ուրիշ բա-  
րեպատեական գործերու, ի բաց առեալ. 1-ն ուղ-  
ջախոհութեան և կրօնաւորութեան ուխտերը, 2.  
երրորդի մը նկատմամբ պարտականութիւն բո-  
վանդակողները. 3. մեղքէ զգուշանալու համար  
զրուած ապաշխարութեան ուխտերը, բայց եթէ  
խոստովանահօրմէ դրուածը, այդպիսի փոխանա-  
կութիւն մը մեղքէ զգուշանալու համար, ոչ նուազ  
ազդեցիկ է, այդ պարագայի մէջ կարող է փո-  
խանակել, Յորելեանի օրերու մէջ, խոստովանա-  
հայրը:

### ԳԻՏԵԼԻ Է. Ը.

Սոստովանահարց իշխանութեան սահմանը  
և սեղմումը:

Յորելեանի կոնդակով, սրբազան Քահանա-  
յապետը, չի շնորհէր արտօնութիւն խոստովա-  
նահարց արձակելու ուրիշ որ և է անկանոնու-



քիւնները որ առաջ եկած են, ծածուկ կամ ան-  
ծանօթ կամ հրապարակական յանցանքէ կամ  
պակասութենէ. և ոչ ալ կուտայ իշխանութիւն  
վերոյիշեալները անօրինելու կամ վերստին ա-  
տակ ընելու ընդունուած աստիճաններուն գոր-  
ծածութեան, նոյն իսկ յատենին խոստովանու-  
թեան:

Նոյնպէս երջանկայիշատակ Բենեդիկտոս  
ԺԴ.-ի «Սուրհուրդ Ապաշխարութեան» սահմա-  
նադրութիւնը իւր ոյժի մէջ կը մնայ յիսկին.  
Քահանայք չեն կրնար արձակել անոր մէջ յի-  
շատակուած մեղքերը:

Այժմեան Առաքելական կոնգակը հրաման  
չի տար արձակելու զանոնք, որոնք սրբազան  
Պապէն, կամ սուրբ Գահէն, կամ եկեղեցա-  
կան Առաջնորդէ մը կամ գատաւորէ յականէ  
յանուանէ բանադրուած, կախակայուած, ար-  
գելուած, կամ յիշեալ որ և է դատակնքոյ  
ներքև ինկած ծանուցուած են. միայն թէ Յո-  
բելեանի տևողութեան միջոցին ապաշխարած և  
պատկանեալ իշխանութեանց կողմէ արձակուած  
առած չըլլան: Իսկ եթէ այդպիսիները, Յոբել-  
եանի տևողութեան միջոցին, կարող չըլլան՝  
ըստ դատման իրենց խոստովանահարց՝ ամէն  
պահանջները կատարել, սրբազան Հայրն մեր  
Պիոս Ժ. կը թոյլատրէ արձակուած առնուլ յա-  
տենի խոստովանութեան լոկ Յոբելեանի ներո-

ղութիւն ստանալու պայմանաւ և պարտադրու-  
թեամբ՝ հարկ եղածը կատարելու փութով՝ երբ  
այդ կարելի ըլլայ:

Ահա ասոնք են, յարգելի և սիրեցեալ խոս-  
տովանահայր եղբարք, Առաքելական յարգելի  
հրահանգները և տրամադրութիւնները, զորս մի  
առ մի և մեկին կերպով գրեցինք. որպէսզի  
խոստովանահարքդ առաջի աչաց ունենաք, նը-  
կատմամբ անոնց, որոնք առթիւ Յոբելեանի առ  
Չեզ պիտի դիմեն արձակուած ստանալու յատենի  
խորհրդական խոստովանութեան իրենց մեղքե-  
րէն ազատուելու համար:

Ասոնցմէ դատ, ի հրամանէ սրբազան Քա-  
հանայապետի, կը պատուիրենք յատկապէս հոգ  
հոգուց ունեցող քահանայից, որ Յոբելեանիս  
տևողութեան միջոցին բանին կենաց քարոզու-  
թիւնը անպակաս ընեն, մոլորեալները դարձի  
բերելու, բարիները իրենց հաւատարմութեան  
մէջ աւելի ևս հաստատելու. ի մի բան, ամենուն  
խրախոյս և քաջալեր ըլլալու համար. որպէսզի  
սրբազան քահանայապետէն շնորհուած այս փրը-  
կաւէտ պատեն առթէն ըստ պատշաճի օգտուին:

Ներկայիւս կը պատուիրենք դարձեալ, բո-  
լոր ժողովրդապետ քահանայից, որ ղեկտեմբերի  
իւնիսն, 15-ին, 22-ին և 25-ին, ձայնաւոր Պատա-  
րագներէն անմիջապէս վերջը, դեռ պատարագի  
զգեստը չի հանած, ամենասուրբ Հաղորդու-



թիւնը՝ նախանշով, և ուր որ չկայ ճաճանչ, մասնատմով, դնել ի բազմոցի՝ յերկրպագութիւն հաւատացելոց, և մտադիր ըլլան որ խորանի վրայ առ սակաւ տասնհերկու մոմ վառուած ըլլայ, և ծուկն չոքած, տիրացուաց և ժողովրդոց հետ, ընել հետևեալ աղօթքները.

1. «Մայր սուրբ սքանչելի» աղօթքը. 2. հինգ «Հայր մեր», հինգ «Ողջոյն» և հինգ «Փառք հօր».

3. «Մայր հաւատոյ» եղանակաւ. և սբ. Հաղորդութեան օրհնութիւն արուելու է ժողովրդեան, այն եղանակաւ և կանոններով, ինչպէս գրուած է ի նոր Մաշտոցի, Վիեննայի տիպ, յէջս 501, 502, 503 և 504:

Արդ՝ յարգելի եղբարք, և բարեպաշտ հաւատացեալք ի Քրիստոս, ներկայ Յորելեանս, նոր առիթ մըն է մեզի համար մեծամեծ արդիւնքներ դիզելու երկնից արքայութեան համար. երիցս երանեալ սրբազան Պապը՝ երկրիս վրայ՝ Քրիստոսի տեսանելի փոխանորդը, աստուածաւանդ իշխանութեամբ բացած է մեզի Քրիստոսի անհուն արդեանց, սբ. Աստուածածնի և բոլոր սրբոց վաստկած անսպառ գանձը, զորս եկեղեցւոյն ձեռքը յանձնած է Քրիստոս Փրկիչն մեր: Ասոնցմով Աստուծոյ Արդարութիւնը կը բաւականանայ մեր ամէն մեղաց պատիժները ներելու. ուստի թէ որ մէկը, Յորելեանի ներողութիւնը առնելէն ետքը, մէկէն մեռնելու

ըլլայ, շիտակ արքայութիւն կ'երթայ՝ առանց քաւարանի, ինչպէս թէ նոր մկրտուած ըլլար. վասնզի եթէ մէկ մը ինչպէս որ պէտք է, խոստովանանքով, գղջմամբ և ապաշխարութեամբ Յորելեանի ներողութիւնը վաստկի, իր հոգին այն վիճակի մէջ կը դնէ, ինչպէս որ անմիջապէս մկրտութենէ վերջն ըլլար, պայծառ, գեղեցիկ, առանց արատ մը ունենալու, առանց պատժոյ արժանի ըլլալու: Արդ մեղաւորներն որ իրենց մեղքերովն ամէն հոգևոր գանձ ու հարստութիւն վատնեք են ու կորանցուցեք են, ու հոգիներն վերջին ողորմելիութեան հասուցեք են, սատանայի գերի եղեք են, Աստուծոյ երեսէն ինկեք են, արքայութենէն զրկուեք են, ինչպէս պիտի կրնան այս մեծ անխելքութիւն ընել և ասանկ երջանկաւէտ բախտը ձեռքէ փախցնել: Վայ է մեզի թէ որ Աստուծոյ ասանկ մեծ ողորմութիւնը բանի տեղ չի դնելով խուլ ըլլանք իր հրաւերին. «Այսօր եթէ ձայնի նորա լուիցէք մի խոստացուցանէք զսիրտս ձեր», կ'ըսէ Հոգին սուրբ: Ուրեմն, գէմ չի կենանք Աստուծոյ հրաւերքին, որ զմեզ իւր սրբազնագոյն փոխանորդի միջոցաւ ապաշխարութեան կը հրաւիրէ մեր օգտին համար. լսենք ինչ կը գոչէ առաքեալը. «Մի ընդունայն զձնօրնս Աստուծոյ ընդունել»: Աստուծոյ այս մեզի պարգևած շնորհքը պարապի չի հանենք, ամէն ժամանակ և ամէն օր այս-




պիսի մեծ գանձ ձեռքերնիս չենք ունենար: Ար-  
ժարձենք մեր հաւատքը, զգենունք այն սէրն և  
այն զգացումը, զոր ունեցան և ունին կաթո-  
ղիկէ աշխարհի բարեպաշտ ժողովուրդը. Քրիս-  
տոսի ծննդեան հրաշալի օրերուն մէջ. ջանանք  
ըմպել կենաց ջրէն, զոր կաթողիկէ սուրբ եկեղե-  
ցին մեզի կը մատուռուակէ: Այս նուիրական  
օրերուն մէջ, չի մոռանանք աղօթելու մեր երիցս-  
երանեալ սուրբ Հօր Պիոս Ժ. սրբազան Պապի  
երկարակեցութեան և բարօրութեան համար.  
Հնորհակալու սրտով, որ հայրաբար աստուածա-  
շունչ ազգեցութեամբ շնորհեց մեզի իւր աստուա-  
ծական իշխանութեամբ Յորեկինի շնորհքը: Աղօ-  
թենք նաև մեր բարեբար և սիրելի Կայսերն և  
ինքնակալին ամենայն Ռուսաց, Օգոստոսփառ  
Նիկոլայ Ալեքսանդրովիչի և ամենայն արքունա-  
կան գերդաստանաց բարօրութեան, առողջու-  
թեան և աջողութեան համար. աղօթենք մեր  
սիրելի և բարեխնամ Փոխարքայի, պերճափայլ  
Կոմս Վորոնցով-Պաշկովի համար, իւր խաղա-  
ղարար բազկով տակաւին երկար տարիներ կա-  
ռավարէ զմեզ. աղօթենք անխաիր բոլոր Քրիս-  
տոնեայ հաւատացելոց համար և մանաւանդ մեր  
Հայ Կաթողիկէայ հասարակութեան համար, որ  
Պարգևատուն ամենեցուն, պարգևէ բոլոր երկ-  
նային բարիքը և շնորհէ հոգևոր և մարմնաւոր  
բարօրութիւն, և հեզու ի վերուստ իւր երկնա-

յին շնորհաց ցօյլը և լուսաւորէ ամենուն մըա-  
քերը, որպէս զի արժանապէս ընդունին ամենքն  
ալ Յորեկինի կենսատու շնորհքը և ներողութիւնք,  
և հոգևոր և մարմնաւոր բարիքներով երջանկա-  
նան, թէ աստ և թէ ի հանդերձելումս:

S. Կ.

Տուեալ ի Տիգրիս, ի զիւսնիս մերում  
ի 20-ն նոյեմբերի, 1913 ամի:



Սարգիս Վ. Տեր-Աբրահամեան Առաքե-  
լական Կառավարիչ ամենայն Հայ-Կա-  
րողիկէից ի Ռուսիա.





9779

Handwritten text in Armenian script, mostly illegible due to fading and bleed-through from the reverse side of the page.



ՀՀ Ազգային գրադարան



NL0031761

2013



shy  
V. 8. 154  
44308

БИБЛИОТЕКА  
ИМПЕРАТОРА  
ВОСТОЧНОСИБИРИЙСКИЙ  
Академии Наук  
СССР

4615